ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Արթուր Գրիգորյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ / ԺԱՄԿԵՏԸ**
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (Դատուն, Պեկին)/
   2018թ. հուլիսի 21-26-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   «Շանսի-Նաիրիտ» Համատեղ Ձեռնարկություն (ՀՁ)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի արտադրական գործունեությանը ծանոթանալու,
   «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի բաժնետեր «BlueStar» ընկերության հետ ՀՁ-ին վերաբերող հարցերի քննարկման,
   չինական «XY International group», «Energy China», «Railway no.3 Engineering group», «Hanergy» ընկերությունների՝ Հայաստանում էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի իրականացման հարցերի քննարկման նպատակով:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի գործունեության, համատեղ կառավարման, աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված հարցեր,
   Հայաստանում արևային լուսաթաղանթների (բարակաթաղանթ) արտադրության հիմնում,
   Հայաստանի էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի իրականացում:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Հանդիպում է կայացել «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի գլխավոր տնօրենի հետ: Գործարանում կատարած շրջայցի ընթացքում քննարկվել են գործարանի արտադրատեխնիկական ընթացիկ իրավիճակը, արտադրության ծավալների մեծացման և դրանց իրացման հետ կապված հարցեր:
   Հանդիպում է կայացել «Շանսի-Նաիրիտ» ՀՁ բաժնետեր «Blue star» ընկերության գլխավոր տնօրենի հետ:

Իմ կողմից բարձրացվել են մի շարք հարցեր և արվել են առաջարկություններ, մասնավորապես՝ «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ում՝ ձեռնարկության միջոցներով աուդիտ անցկացնելու հարցը: Առաջարկվել է ՀՁ-ում ստեղծել համապատասխան պայմաններ՝ մասնավորապես ֆինանսական բավարարման առումով, հայկական քվոտայով պաշտոնները համալրելու նպատակով: Առաջարկվել է դիտարկել գործարանում մեկնարկած վերանորոգման աշխատանքներն առավել սեղմ ժամկետում ավարտելու հնարավորությունը և վերանայել 2018թ. գործարար ծրագրի ցուցանիշները: Քննարկվել է «Blue star» ընկերության կողմից «Շանսի-Նաիրիտ» ՀՁ – ին տրամադրված փոխառությունների տոկոսների նվազեցման հնարավորությունները:

Հանդիպում է կայացել չինական «Hanergy» և «Energy China» ընկերությունների ղեկավարների հետ: Քննարկվել են Հայաստանում արևային լուսաթաղանթների արտադրություն հիմնելու հնարավորությունները;

Հանդիպում է կայացել չինական «China Railway no.3 Engineering group» ընկերության ներկայացուցիչների հետ: Ընկերությունը հետաքրքրություն է ցուցաբերել Հայաստանի էներգետիկայի բնագավառում ներդրումներ իրականացնելու նպատակով:

Հանդիպում է կայացել «XY International group» ղեկավարի հետ: Քննարկվել է Հայաստանում համակցված շոգեգազային ցիկլով կայանի կառուցման հնարավորությունը:

8. **<u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>**

«Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի հետ կապված բարձրացված բոլոր հարցերի վերաբերյալ «Blue star» ընկերության գլխավոր տնօրենի հետ ձեռք են բերվել կոնկրետ պայմանավորվածություններ՝ դրանք իրականացնելու նպատակով:

«Hanergy» և «Energy China» ընկերությունների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել ծրագիրը քննարկել նաև հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի առաջիկա նիստի շրջանակներում:

«XY International group» ընկերության ղեկավարի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ընկերության ներկայացուցիչներն այցելեն Հայաստան, հատկապես՝ գազային կայանի կառուցման ներդրումային ծրագիրը քննարկելու նպատակով:

9. **<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>**

Հնարավոր սեղմ ժամկետում առաջարկել «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ում աուդիտ անցկացնող ընկերությանը, որը թույլ կտա հստակ պատկեր ունենալ ընկերության ֆինանսատնտեսական իրավիճակի և հետագա անելիքների վերաբերյալ:

Չինական «Hanergy» և «Energy China» ընկերությունների հետ Հայաստանում արևային լուսաթաղանթների արտադրություն հիմնելու վերաբերյալ հարցը ներառել հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի առաջիկա նիստի օրակարգում: «XY International group», «Railway no.3 Engineering group» ընկերությունների հետ շարունակել աշխատանքները ներդրումային ծրագրերը վերջնականացնելու նպատակով: